ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

Համայնքային աղքատության հաղթահարման փորձառություն/Community Poverty Reduction “Know How”
ԾՐԱԳԻՐ NEAR-TS/2020/421-104

ՀՈՒԼԻՍ 2021

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)

«Համայնքային աղքատության հաղթահարման փորձառություն» ծրագիրն իրականացվում է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC), Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ (CRRC), Եվրասիա համագործակցություն հիմնադրամ և Հրանտ Մաթևոսյան հիմնադրամ կազմակերպությունների կողմից՝ համագործակցաբար, ԵՄ ֆինանսական աջակցությամբ

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում բազմաչափ աղքատության մակարդակի կրճատմանը՝ քաղաքացիական հասարակության կարողությունների հզորացման և շահառուների տեղեկացվածության բարձրացման միջոցով, մեծացնելով մասնակցությունը համայնքային զարգացման ծրագրերին և աղքատամետ բարեփոխումների իրականացմանը:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC) հանրային ծրագրերի և քաղաքականությունների մոնիտորինգին և վերլուծությանն ուղղված ոչ առևտրային նախաձեռնություն է: 2001 թվականից ի վեր Կենտրոնն իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնցում բավականին մեծ դեր են ստացել առանձին ոլորտների քաղաքականությունների, ծրագրերի և բյուջեների վերլուծությունները: Կարևորելով հանրային միջոցներով հանրության համար իրականացվող ծրագրերի նպատակայնությունը, հասցեականությունը, իրականացման արդյունավետությունը և հանրության գոհունակությունը՝ Կենտրոնը փորձում է պրոֆեսիոնալ ներդրում ունենալ քաղաքականությունների մշակման և քննարկման գործընթացներում:

Ծրագրի շրջանակներում Կենտրոնն իրականացնում է Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում իրականացվող հանրային քաղաքականությունների և ծրագրերի քարտեզագրման, ՔՀԿ-ների մոնիտորինգի և գնահատման կարողությունների բարելավման, քաղաքականությունների մշակման գործընթացում մասնակցության ընդլայնմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև իրականացվող քաղաքականությունների և առանձին բյուջետային ծրագրերի սոցիալական ազդեցության գնահատում:

«Բյուջետային քաղաքականությունների ամփոփագիր. Լոռու մարզ» հրապարակումը վերլուծական-տեղեկատվական հաշվետվություն է, որում համառոտ կերպով ամփոփված է մարզի սոցիալ-տնտեսական պատկերը, բյուջեները նկարագրող տարբեր պաշտոնական և համայնքային աղբյուրներից ստացված տեղեկատվությունը: Այն ուղղված է հանրության լայն շրջանակին, ինչպես նաև մասնագիտական հանրույթին՝ նպատակ ունենալով հասանելի դարձնել տեղեկատվությունը և բարձրացնել իրազեկվածության մակարդակը, հիմքեր ստեղծել քաղաքականությունների վերլուծության, արդյունավետ երկխոսության և տեղեկացված քննարկումների համար:

Հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հղումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 3

ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 8

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵ 9

- ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 10
- ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ 15
- ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ 17
- ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 21

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 25

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ 25

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 26

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Լոռու մարզը տեղակայված է Հայաստանի հյուսիսում՝ սահմանակցելով Վրաստանին: Մարզը տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում՝ զբաղեցնելով 3,799 կմ^2 կամ հանրապետության տարածքի 12.8 տոկոսը: Տարածքի 250.9 հազար հա-ն գյուղատնտեսական նշանակության հողեր են (ներառյալ 42.0 հազար հա վարելահողեր): Մարզն ունի 56 համայնքներ, որոնք ներառում են 8 քաղաքային և 122 գյուղական բնակավայրեր:

Լոռու մարզը հարուստ է բնական և պատմամշակութային հուշարձաններով, որոնք մարզը դարձնում են զբոսաշրջության համար առավել գրավիչ: Մարզը հարուստ է նաև օգտակար հանածոներով, մասնավորապես՝ պղնձով:

Գծապատկեր 1. Լոռու մարզի բնակչության կառուցվածքն ըստ բնակավայրերի, տոկոս



Բնակչություն. 2020 թվականի տարեսկզբի դրությամբ Լոռու մարզի մշտական բնակչությունը կազմել է 213.3 հազար մարդ կամ ՀՀ բնակչության 7.2 տոկոսը: Մարզի բնակչության 59.1 տոկոսը բնակվում են քաղաքային բնակավայրերում, իսկ 40.1 տոկոսը՝ գյուղական: Ընդ որում, քաղաքային բնակչության կեսից ավելին՝ 61.3 տոկոս, կամ մարզի բնակչության 36.2 տոկոսը բնակվում են Վանաձոր քաղաքում:



Համախառն թողարկում. 2018 թվականի տվյալներով[1] Լոռու մարզի ՀՆԱ-ն կազմել է 248.2 մլրդ դրամ՝ ձևավորելով հանրապետական ՀՆԱ-ի 4.1 տոկոսը: Մարզի բնակչության մեկ շնչի հաշվով թողարկված արտադրանքի ծավալը կազմել է 1,147.0 հազար դրամ, ինչը զիջում է միջին հանրապետական ցուցանիշը ավելի քան 43 տոկոսով: Նկատենք, որ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով Լոռու մարզը զիջում է հանրապետության մյուս բոլոր մարզերին՝ բացառությամբ Տավուշի և Գեղարքունիքի:

[1] 2019 թվականի տվյալները հասանելի կլինեն 2021 թվականի վերջին՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021» հրապարակմամբ:

Գծապատկեր 2. ՀՆԱ կառուցվածքն ըստ մարզերի, 2018թ., տոկոս



Գծապատկեր 3. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ըստ մարզերի, 2018թ., հազար դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Տնտեսության առավել էական դերակատարում ունեցող ճյուղերն են գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը, որոնց կշիռը 2019 թվականին կազմել է հանրապետական ցուցանիշների համապատասխանաբար 8.0 և 4.2 տոկոսը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կեսից ավելին՝ 68.5 տոկոսը բաժին է ընկնում անասնաբուծությանը, իսկ 31.5 տոկոսը՝ բուսաբուծությանը:

Արդյունաբերության ճյուղերից էական դերակատարում ունեն մշակող արդյունաբերությունը և հանքագործական արդյունաբերությունը. արդյունաբերական արտադրանքի 48 տոկոսը բաժին է ընկնում մշակող արդյունաբերությանը, իսկ 41 տոկոսը՝ հանքագործական արդյունաբերությանը: Մշակող արդյունաբերության հիմնական ուղղություններն են սննդամթերքի արտադրությունը՝ 77.6 տոկոս, և հագուստի արտադրությունը՝ 17.3 տոկոս:

Գծապատկեր 4. Լոռու մարզի տնտեսության հիմնական ճյուղերի կշիռը համապատասխան ճյուղերի ՀՀ համախառն արտադրանքի ծավալում, 2019թ., տոկոս



Գծապատկեր 5. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ ճյուղերի, 2019թ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Զբաղվածություն. Մարզում զբաղվածության մակարդակը կազմում է 38.5 տոկոս, իսկ գործազրկությանը՝ 19.9 տոկոս: Զբաղվածության մակարդակը զիջում է հանրապետական ցուցանիշը 10.4 տոկոսային կետով, իսկ գործազրկության մակարդակը գերազանցում է հանրապետական ցուցանիշը 1.6 տոկոսային կետով:

Գծապատկեր 6. Զբաղվածության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս



Գծապատկեր 7. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Բնակչության եկամուտներ և ծախսեր. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտները 2019 թվականին կազմել են 45,396 դրամ, ինչը զիջում է միջին հանրապետական ցուցանիշը 15,680 դրամով կամ 25.7 տոկոսով: Ընդ որում, դրամական եկամուտների կառուցվածքում մեծ է աշխատավարձի կշիռը (42.3 տոկոս), հաջորդում են թոշակները (22.8 տոկոս), ՀՀ-ից դուրս ապրող բարեկամներից ստացված դրամական տրանսֆերտները (10.9 տոկոս) և ինքնազբաղվածությունից եկամուտը (9.4 տոկոս): Գյուղմթերքի և կենդանիների վաճառքից եկամուտները կազմում են SS մեկ շնչի հաշվով եկամուտների 7.1 տոկոսը:

Գծապատկեր 8. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտները, դրամ



Աղյուսակ 1. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների կառուցվածն ըստ եկամուտների աղբյուրների, Լոռու մարզ

	2019	
	դրամ	տոկոս
Ընդամենը	**45,396**	**100.0**
Վարձու աշխատանք	19,202	42.3
Ինքնազբաղվածություն	4,266	9.4
Գյուղմթերքի և կենդանիների վաճառք	3,217	7.1
Թոշակներ	10,335	22.8
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացման նպաստներ	1,838	4.0
Այլ պետական նպաստներ և կրթաթոշակ	438	1.0
ՀՀ-ում ապրող բարեկամներից տրանսֆերտներ	960	2.1
ՀՀ-ից դուրս ապրող բարեկամներից տրանսֆերտներ	4,939	10.9
Այլ եկամուտներ	202	0.4

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և ՏՋՀԿ հաշվարկներ

Միջին ամսական աշխատավարձի մակարդակը կազմում է 124,293 դրամ՝ զիջելով հանրապետական միջին ցուցանիշը 32.0 տոկոսով կամ 58,380 դրամով:

Գծապատկեր 9. Միջին ամսական աշխատավարձի մակարդակն ըստ մարզերի, 2019թ., դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Ի տարբերություն եկամուտների, ՏՏ մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերը 2019 թվականին նախորդ տարվա նկատմամբ կրճատվել են 11.1 տոկոսով և կազմել 42,001 դրամ:

Գծապատկեր 10. Լոռու մարզում ՏՏ մեկ շնչի հաշվով ամսական սպառողական ծախսերի դինամիական 2015-2019թթ.



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և ՏՀՀԿ հաշվարկներ

Աղքատություն. 2019-ին աղքատության մակարդակը[2] Լոռու մարզում կազմել է 30.1 տոկոս, որը գերազանցում է հանրապետական ցուցանիշը 3.7 տոկոսային կետով: Ծայրահեղ աղքատության մակարդակը մարզում 2019-ին նվազել է և կազմել է 1.5 տոկոս, որը դեռ 0.1 տոկոսային կետով բարձր է հանրապետական ցուցանիշից:

[2] 2020 թվականին ՀՀ-ում աղքատության գնահատման համար կիրառվել է նոր մեթոդաբանություն («Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020»՝ https://www.armstat.am/am/?nid=81&id=2323): Հետևաբար 2019-ի տվյալները լիովին համադրելի չեն նախորդ տարիների ցուցանիշների հետ:

Գծապատկեր 11. Աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների դինամիկան Լոռու մարզում և ՀՀ-ում, 2015-2019թթ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

2020 թվականի տարեվերջի դրությամբ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ են ստացել մարզի SS-ների ավելի քան 23 տոկոսը կամ 13,693 SS: Մասնավորապես, ընտանեկան նպաստ են ստանում 8,351 SS, սոցիալական նպաստ՝ 4,586 SS և եռամսյակային հրատապ օգնություն՝ 756 SS:

Գծապատկեր 12. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող SS-ների բաշխումն ըստ մարզերի, 2020 թվականի տարեվերջի դրությամբ



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը 2017 թվականին հաստատել է ՀՀ Լոռու մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը[3], որում սահմանվում են մարզում երկարաժամկետ զարգացման հեռանկարները և ուղղությունները:

Ըստ այդ ռազմավարության, Լոռու մարզի զարգացման տեսլականն է՝ **ունենալ բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն, SS ոլորտ և զարգացած զբոսաշրջություն:**

Ռազավարությամբ սահմանվում են Լոռու մարզի զարգացման հետևյալ ռազմավարական նպատակները, վերջնական արդյունքների թիրախային ցուցանիշները և զարգացման գերակա ուղղությունները:

Աղյուսակ 2. Լոռու մարզի զարգացման ռազմավարական ուղղությունները և չափորոշիչները

ՆՊԱՏԱԿՆԵՐ
1. Լոռու մարզի տնտեսական աճի ապահովում՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառում, աշխատատեղերի ստեղծում, աղքատության կրճատում: *2. Լոռու մարզի երեք տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովում՝ կարևորելով սահմանամերձ և թույլ զարգացած բնակավայրերը:* *3. Լոռու մարզում տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունների և համակարգերի բարելավում:*
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
• *2025 թվականին մեկ շնչի հաշվով մարզային ՀՆԱ-ի ցուցանիշի աճ մինչև հանրապետական մակարդակի 72 տոկոսը՝ 2015 թվականի 63 տոկոսի դիմաց,* • *2025 թվականին 2015 թվականի համեմատությամբ ակտիվ ձեռնակությունների թվաքանակի առնվազն 12 տոկոս աճ,* • *2025 թվականին 2015 թվականի համեմատությամբ նորագույն տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների թվաքաքանակի 20 տոկոս աճ,* • *2025 թվականին 2015-ի համեմատությամբ ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների առնվազն 10 տոկոս աճ,* • *Մինչև 2025 թվականը մարզում գործազրկության մակարդակի կրճատում մինչև 8.8 տոկոս մակարդակ՝ 2015-ի 15.7 տոկոսի դիմաց,* • *Մինչև 2025 թվականը մարզում աղքատության մակարդակի նվազեցում մինչև 26 տոկոս՝ 2015 թվականի 36.2 տոկոսի դիմաց,* • *Մինչև 2025 թվականը մարզի համայնքներ նոր տեղական զարգացման պլանների մշակում,* • *Մինչև 2025 թվականը մարզային վարչակազմերում բարձրագույն կրթությամբ աշխատակիցների կշռի աճ մինչև 95 տոկոս,* • *Մարզային/տեղական զարգացմանն ուղղված վերապատրաստման ծրագրերի մասնակցած մարզային և համայնքային աշխատողների կշիռը կկազմի առնվազն 80 տոկոս:*
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. Արտահանմանը միտված արդյունաբերության զարգացում, մասնավորապես՝ հանքարդյունաբերություն, թեթև արդյունաբերություն, սննդի արդյունաբերություն և SS ոլորտ: 2. *Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում:* 3. *Մշակութային, գյուղական տուրիզմի զարգացում, ներառյալ՝ ծմեռային տուրիզմ և էկոտուրիզմ:*

Աղբյուրը՝ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարություն

[3] ՀՀ կառավարությա 2017 թվականի հուլիսի 6-ի N 29 արձանագրային որոշում:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵ

Լոռու մարզի համայնքների բյուջեների ընդամենը ծախսերը 2020 թվականին կազմել են 9,118 մլն դրամ կամ ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի 6.6 տոկոսը, իսկ եկամուտները՝ 10,252 մլն դրամ կամ ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների 6.6 տոկոսը:

Աղյուսակ 3. Լոռու մարզի համայնքային բյուջեների հիմնական ցուցանիշները, 2018-2021թթ.

	2018 Փաստ.	2019 Փաստ.	2020 Փաստ.	2021 Պլան.[4]
ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսեր, մլն դրամ	6,625	8,168	9,118	12,728
ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի աճ, տոկոս	0.9	23.3	11.6	39.6
ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի կշիռը ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերում, տոկոս	5.6	6.1	6.6	-
ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտներ, մլն դրամ	7,172	8,302	10,252	10,699
ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների աճ, տոկոս	10.3	15.7	23.5	4.4
ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների կշիռը ՀՀ համայնքային ամփոփ բյուջեի եկամուտներում, տոկոս	5.6	5.7	6.6	-

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, ՀՀ Լոռու մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

Լոռու մարզում համայնքային ծախսերի մեկ շնչի հաշվով միջին ցուցանիշը 2020 թվականին նախորդ տարվա համեմատությամբ աճել է 12.8 տոկոսով՝ 37,907 դրամից հասնելով մինչև 42,745 դրամ մակարդակի: Համայնքային եկամուտների աճն ավելի մեծ է՝ մեկ շնչի հաշվով միջին ցուցանիշը 38,528 դրամից աճել է մինչև 48,059 դրամ կամ 24.7 տոկոս:

Գծապատկեր 13. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերի ցուցանիշը, ՀՀ դրամ



Գծապատկեր 14. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտների ցուցանիշը, ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, ՀՀ Լոռու մարզպետարան, ՀՀ ՎԿ և ՏԶՀԿ հաշվարկներ

Լոռու մարզում և՛ համայնքային եկամուտների, և՛ համայնքային ծախսերի մակարդակը ցածր է հանրապետական միջին մակարդակից: Մեկ բնակչի հաշվով համայնքային ծախսերի և եկամուտների մակարդակներով Լոռու մարզը մոտ 9 տոկոսով զիջում է միջին հանրապետական ցուցանիշներին:

[4] 2021 թվականին վերաբերվող բյուջետային տվյալները ծրագրային են, իսկ նախորդ տարիների համար՝ փաստացի:

Գծապատկեր 15. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերն ըստ մարզերի, ՀՀ դրամ



Գծապատկեր 16. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտներն ըստ մարզերի, ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, ՀՀ ՎԿ և ՏԶՀԿ հաշվարկներ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Համայնքային բյուջետային եկամուտների կառուցվածքում գերակշռում են պաշտոնական դրամաշնորհները: 2020 թվականին պաշտոնական դրամաշնորհները կազմել են համայնքային եկամուտների 74.1 տոկոսը կամ 7,593 մլն դրամ: Հարկային եկամուտների և տուրքերի կշիռը համայնքային եկամուտներում կազմել է 14.0 տոկոս կամ 1,610 մլն դրամ: Նկատենք, որ 2018 թվականի համեմատությամբ պաշտոնական դրամաշնորհների կշիռը համայնքային եկամուտներում աճել է 7.2 տոկոսային կետով, իսկ հարկային եկամուտների և տուրքերի դեպքում՝ նվազել է 3.6 տոկոսային կետով:

Գծապատկեր 17. Լոռու մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների կառուցվածքը, 2018 և 2020թթ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ Լոռու մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

Համայնքային եկամուտների աճը հիմնականում ապահովվում է պաշտոնական դրամաշնորհների աճի հաշվին: Վերջիններս նախորդ երկու տարիների ընթացքում աճել են

միջինում տարեկան 26.1 տոկոսով: Հարկային եկամուտները և տուրքերը 2019 թվականի համեմատությամբ աճել են 0.4 տոկոսով, իսկ 2018 թվականի նկատմամբ՝ 14.0 տոկոսով:

2021 թվականին կանխատեսվում է, որ ընդամենը համայնքային եկամուտները կկազմեն 10,699 մլն դրամ՝ 2020 թվականի մակարդակը գերազանցելով 4.4 տոկոսով: Ընդ որում, կաճեն եկամուտների բոլոր բաղադրիչները:

Գծապատկեր 18. Լոռու մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտները, 2018-2021թթ., մլն դրամ



Աղբյուր՝ ՀՀ Լոռու մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ

ՈՒշագրավ է, 2018-2020 թվականների ընթացքում հարկերի և տուրքերի կառուցվածքում նվազել են անշարժ գույքի հարկերը: Սա վերաբերում է թե՛ համայնքների վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար գույքահարկին, թե՛ հողի հարկին: Համայնքային բյուջեներ ուղղվող տեղական և պետական տուրքերը ևս նվազել են:

Ի տարբերություն անշարժ գույքի, փոխադրամիջոցների համար գանձվող գույքահարկից մուտքերն աճում են:

Գծապատկեր 19. ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի հարկերի և տուրքերի կառուցվածքը, 2018-2021թթ., տոկոս



Գծապատկեր 20. ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի հարկերի և տուրքերի դինամիկան, 2018-2021թթ., հազար դրամ



Գույքահարկ՝ շենքերի և շինությունների
Գույքահարկ՝ փոխադրամիջոցների
Հողի հարկ
Տեղական և պետական տուրքեր

Աղբյուր՝ ՀՀ Լոռու մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

Մեկ բնակչի հաշվով Լոռու համայնքներում հավաքագրված անշարժ գույքի հարկի միջին տարեկան մակարդակը կազմում է 2,200 դրամ, իսկ փոխադրամիջոցների գույքահարկի մակարդակը՝ 2,800 դրամ:

Մեկ բնակչի հաշվով հավաքագրված անշարժ գույքի հարկերի ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Չկալով համայնքում՝ 13,380 դրամ: Համայնքների մոտ 63 տոկոսի դեպքում անշարժ գույքի հարկի մեկ շնչի հաշվով տարեկան մակարդակը չի գերազանցում 2,000 դրամը:

Հարկ է նշել, որ անշարժ գույքի հարկի 70 տոկոսը բաժին է ընկնում հողի հարկին և միայն 30 տոկոսն է կազմում շենքերի և շինությունների համար վճարվող հարկը: Ընդ որում, մարզի 16 համայնքներում շենքերի և շինությունների համար գույքահարկ ընդհանրապես չի հավաքագրվում՝ պայմանավորված համապատասխան անշարժ գույքի կադաստրային ցածր արժեքով[5]:

Փոխադրամիջոցների գույքահարկի դեպքում բաշխումն ունի հակառակ պատկերը: Համայնքների մոտ 77 տոկոսի դեպքում մեկ շնչի հաշվով փոխադրամիջոցների գույքահարկի մակարդակը գերազանցում է 2,000 դրամը:

Գծապատկեր 21. Համայնքների բաշխումն ըստ մեկ բնակչի հաշվով գույքահարկի մակարդակի



1 բնակչի հաշվով	Համայնքների քանակ	Տոկոս ընդամենը համայնքներում
> 4 հազ. դրամ	4	7.1
3 – 4 հազ. դրամ	8	14.3
2-3 հազ. դրամ	9	16.1
1-2 հազ. դրամ	22	39.3
<=1 հազ. դրամ	13	23.2
Ընդամենը	**56**	**100.0**



> 4 հազ. դրամ	8	14.3
3 – 4 հազ. դրամ	13	23.2
2-3 հազ. դրամ	22	39.3
1-2 հազ. դրամ	12	21.4
<=1 հազ. դրամ	1	1.8
Ընդամենը	**56**	**100.0**

Աղբյուր՝ ՀՀ Լոռու մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Դրամաշնորհների կազմում գերակշիռ մասը՝ ավելի քան 99.9 տոկոսը կազմում են ներքին դրամաշնորհները, այսինքն՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաները և սուբվենցիաները: Արտաքին դրամաշնորհների մակարդակը շատ փոքր է. 2020 թվականին կազմել է ընդամենը 8.2 մլն դրամ: Արտաքին դրամաշնորհ է ստացել միայն մեկ համայնք՝ Մեծավան համայնքը:

[5] «Գույքահարկի մասին» ՀՀ օրենք: Ուժը կորցրել է 2021 թվականի հունվարի 1-ին:

Ներքին դրամաշնորհների կառուցվածքում գերակշռում են դոտացիաները: 2019-2020 թվականների ընթացքում դոտացիաների միջին տարեկան աճը կազմել է 736.5 մլն դրամ կամ 15.9 տոկոս: Չնայած դոտացիաների բացարձակ աճին, վերջիններիս կշիռը ներքին դրամաշնորհների կառուցվածքում նվազել է՝ 2018-ի 91.1 տոկոսի համեմատությամբ և 2020-ին կազմել՝ 76.8 տոկոս:

Դոտացիաները *համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման (համահարթեցման) նպատակով, պետական բյուջեից տրամադրվող ամենամյա անհատույց հատկացումներ են՝ համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, ինչպես նաև բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծելու համար[6]: Պետական բյուջեից տրամադրվող դոտացիաները բաղկացած են 2 մասից: Առաջին մասով դոտացիաներ հատկացվում են այն համայնքներին, որոնց բնակչությունը չի գերազանցում 3,500-ը՝ տվյալ տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով (բոլոր համայնքներին հավասարաչափ): Իսկ երկրորդ մասով դոտացիաներ տրամադրվում են ըստ համայնքների եկամտային կարողության և ծախսային կարիքի[7]:*

Համայնքներին տրամադրվող պետական սուբվենցիաների ծավալների աճի տեմպը գերազանցում է դոտացիաների աճի տեմպին և վերջին տարիներին կազմել է 102.9 տոկոս: 2020 թվականին սուբվենցիաների աճն ամենամեծն է. Լոռու մարզի համայնքներին տրամադրվել է 1,756 մլն դրամ սուբվենցիա, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 2 անգամ:

Նկատենք սակայն, որ 2021 թվականի համար համայնքների սուբվենցիոն ֆինանսավորման պլանավորված մակարդակը զիջում է 2020-ի մակարդակը 33.2 տոկոսով:

2020 թվականին դոտացիաները կազմել են 5,829 մլն դրամ, որոնց աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 22.5 տոկոս: 2021-ին պլանավորվում է դոտացիաների 11.2 տոկոս աճ կամ 6,480 մլն դրամ մակարդակ:

Գծապատկեր 22. Լոռու մարզի համայնքային ամփոփ բյուջեի ներքին դրամաշնորհների կառուցվածքը



Աղբյուր՝ ՀՀ Լոռու մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

Դոտացիաներ տրամադրվել են Լոռու մարզի բոլոր 56 համայնքներին: Տրամադրված դոտացիաների միջին մեծությունը կազմել է 104.1 մլն դրամ: Համայնքներից 43-ի կամ 77 տոկոսի դեպքում տրամադրված դոտացիաները չեն գերազանցել 100 մլն դրամը: Միևնույն ժամանակ, Վանաձոր քաղաքին տրամադրվել է 1,916 մլն դրամ դոտացիա, որը կազմում է

[6] «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, Հոդված 2:
[7] «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, Հոդված 5 – Հոդված 16:

մարզի համայնքներին տրված դոտացիաների ընդհանուր ծավալի 32.9 տոկոսը: Առանց Վանաձոր քաղաքի համայնքներին տրամադրվող դոտացիաների միջին մեծությունը կազմել է 71.1 մլն դրամ:

Գծապատկեր 23. Դոտացիաների բաշխումն ըստ համայնքների[8], մլն դրամ, 2020թ.



Աղբյուր՝ ՀՀ Լոռու մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

Պետական բյուջեից մարզի համայնքների մոտ 77 տոկոսին կամ 43 համայնքի տրամադրվել են սուբվենցիաներ, ընդ որում՝ համայնքներից 40-ի դեպքում դրանք կապիտալ սուբվենցիաներ են: Տրամադրված կապիտալ սուբվենցիաների միջին մեծությունը կազմել է 42.5 մլն դրամ: Վանաձոր քաղաքին տրամադրվել է 527.3 մլն դրամ կապիտալ սուբվենցիա, որը կազմում է մարզի համայնքներին տրված կապիտալ սուբվենցիաների ընդհանուր ծավալի 31 տոկոսը:

***Սուբվենցիաները** համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ են[9]:*

Գծապատկեր 24. Կապիտալ սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների[8], մլն դրամ, 2020թ.



Աղբյուր՝ ՀՀ Լոռու մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

Ընթացիկ սուբվենցիաներ տրամադրվել են մարզի 20 համայնքների: Տրամադրված ընթացիկ սուբվենցիաների միջին մեծությունը կազմել է 2.8 մլն դրամ:

[8] Վանաձոր քաղաքը ներկայացված չէ:
[9] ՀՀ կառավարության N1708-Ն որոշում «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին», 16.11.2006թ., մաս I.3:

Գծապատկեր 25. Ընթացիկ սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների[10], մլն դրամ, 2020թ.



Աղբյուր՝ ՀՀ Լոռու մարզպետարան և ՏՀՀԿ հաշվարկներ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

Լոռու մարզի համայնքների ընդամենը ծախսերը 2020 թվականին նախորդ տարվա համեմատությամբ աճել են 11.6 տոկոսով: Ընդ որում, ծախսերի աճի 3.4 տոկոսային կետը բաժին է ընկնում Վանաձոր քաղաքին:

Մարզի համայնքների ընդամենը ծախսերում Վանաձոր քաղաքի ծախսերի կշիռը կազմում է 33.3 տոկոս, հաջորդում են Ալավերդի (7.1 տոկոս), Տաշիր (6.1 տոկոս), Ստեփանավան (5.8 տոկոս), Սպիտակ (5.0 տոկոս), Ախթալա (4.8 տոկոս) և Շնող (4.0 տոկոս) համայնքները: Լոռի Բերդ, Օձուն, Գյուլագարակ, Մեծավան և Գուգարք համայնքների կշիռը ընդամենը ծախսերում տատանվում է 2.4-ից 2.9 տոկոսի սահմաններում, իսկ մյուս համայնքներինը՝ մինչև 1.9 տոկոսի սահմաններում:

Գծապատկեր 26. Լոռու մարզի համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի կառուցվածքն ըստ համայնքների, 2020թ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ Լոռու մարզպետարան և ՏՀՀԿ հաշվարկներ

Համայնքային ծախսերի ամենամեծ գործառական ուղղությունը «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններն» են, որին ուղղվում է մարզի համայնքների ծախսերի 31.2 (առանց Վանաձոր քաղաքի՝ 36.1) տոկոսը: Հաջորդում են «Կրթություն», «Բնակարանային

[10] Վանաձոր քաղաքը ներկայացված չէ:

շինարարություն և կոմունալ ծառայություններ», «Հանգիստ, մշակույթ, կրոն» և «Տնտեսական հարաբերություններ» ոլորտները՝ համապատասխանաբար՝ 25.3, 13.6, 9.8 և 9.6 տոկոսներով: Վանաձոր քաղաքի համապատասխան ծախսերի չդիտարկումը տնտեսական հարաբերությունների դեպքում հանգեցնում է ծախսերի կշռի աճի մինչև 12.9 տոկոս, իսկ մյուս ուղղությունների դեպքում՝ կրճատման:

Գծապատկեր 27. ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսային ուղղությունների կշիռները ԼՄ համայնքային ամփոփ բյուջեում, 2018-2021թթ., տոկոս



Աղբյուր՝ ՀՀ Լոռու մարզպետարան և ՏԶՀԿ հաշվարկներ

Տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերը գերազանցապես ուղղվում են տրանսպորտի ոլորտ: Սա վերաբերվում է թե՛ Վանաձոր համայնքին, թե՛ մարզի մնացած համայնքներին:

Համայնքային ծախսերի 70.3 տոկոսը հանդիսանում են ընթացիկ բնույթի ծախսեր: Ընդ որում, Վանաձորում դրանք կազմում են 83.6, իսկ մյուս համայնքներում՝ 64.6 տոկոս: Այդ թվում՝ աշխատավարձերին և հավելավճարներին է ուղղվում ծախսերի 16.7 տոկոսը: Վանաձորում այս ծախսերի մասնաբաժինը մարզի մյուս համայնքների համեմատությամբ ավելի փոքր է՝ 9.5 տոկոս:

Կապիտալ ծախսերի կշիռը ընդամենը ծախսերում կազմում է միջինում 35.6 տոկոս:

Աղյուսակ 4. ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգումը, 2020թ.

	Վանաձոր		Ընդամենը առանց Վանաձորի		Ընդամենը Լոռու մարզ	
	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%
Ընդամենը ծախսեր	**3,801.5**	**100.0**	**8,926.5**	**100.0**	**12,728.0**	**100.0**
Ընթացիկ ծախսեր	3,177.0	83.6	5,766.1	64.6	8,943.1	70.3
Աշխատավարձ և հավելավճարներ	*362.9*	*9.5*	*1,757.6*	*19.7*	*2,120.5*	*16.7*
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	1,043.4	27.4	3,486.0	39.1	4,529.4	35.6
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-418.9	-11.0	-325.5	-3.6	-744.4	-5.8

Աղբյուր՝ ՀՀ Լոռու մարզպետարան և ՏՋՀԿ հաշվարկներ

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ

Սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացման նպատակով 2019 և 2020 թվականների ընթացքում Լոռու մարզի 40 համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերին պետական բյուջեից ուղղվել է 2,416.0 մլն դրամ համաֆինանսավորում[11]: Նշենք, որ 32 համայնքների 54 ծրագրերի 1,135.5 մլն դրամ համաֆինանսավորումը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2020 թվականի դեկտեմբեր ամսին[12], հետևաբար ծրագրերը փաստացի իրականացվելու են 2021 թվականի ընթացքում:

2019 և 2020 թվականների սուբվենցիոն ծրագրերի կառուցվածքում գերակշռել են տնտեսական ենթակառուցվածների զարգացմանն ուղղված ծրագրերը, որոնց ուղղվող պետական ֆինանսավորումը (առանց համայնքների համաֆինանսավորման) կազմել է 1,570.9 մլն դրամ: Հաջորդում են սոցիալական և մշակութային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերը՝ 661.5 մլն դրամ պետական ֆինանսավորմամբ, և գյուղատնտեսական ծրագրերը՝ 183.6 մլն դրամ պետական ֆինանսավորմամբ:

Պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիաների մեծ մասը՝ 28.8 տոկոսն ուղղվել է Վանաձոր համայնքում իրականացվող ծրագրերին: Հաջորդում են Ախթալա (13.5 տոկոս), Լոռի Բերդ (5.7 տոկոս), Սպիտակ (5.6 տոկոս), Տաշիր (5.2 տոկոս) և Օձուն (4.9 տոկոս) համայնքները:

[11] Պայմանավորված կոնկրետ ոլորտով, համայնքի աշխարհագրական դիրքով, ծրագրի առանձնահատկությամբ, ինչպես նաև տվյալ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ծրագրի ազդեցությամբ՝ պետական բյուջեից համաֆինանսավորվում է համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայիոն ծրագրերի ընդհանուր արժեքի 30-ից 70 տոկոսը:
[12] ՀՀ կառավարության 2112-Ն (17.12.2020) և 2183-Ն (24.12.2020) որոշումներ:

Գծապատկեր 28. Սուբվենցիոն ծրագրերի բաշխումն ըստ ոլորտների, մլն դրամ



Գծապատկեր 29. Սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման բաշխումն ըստ համայնքների, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏԶՀԿ հաշվարկներ

Մարզի 19 համայնքներում 2019 և 2020 թվականների ընթացքում իրականացվել են 3 և ավելի թվով սուբվենցիոն ծրագրեր, ընդ որում՝ դրանցից 10-ում՝ 5 և ավելի ծրագրեր: Մասնավորապես Սարահարթ, Մարգահովիտ և Թումանյան համայնքներից յուրաքանչյուրում իրականացվել են թվով 5 ծրագրեր, Սպիտակ, Տաշիր և Օձուն համայնքներում՝ 6 ծրագիր, Մեծավան համայնքում՝ 7 ծրագիր, Վանաձոր համայնքում՝ 9 ծրագիր, Ախթալա համայնքում՝ 16 ծրագիր և Լոռի Բերդ համայնքում՝ 18 ծրագիր: 2-ական ծրագիր իրականացրած համայնքները 11-ն են: 16 համայնքներ այս իմաստով շատ պասիվ են գտնվել և ընդհանրապես սուբվենցիոն ծրագրեր չեն իրականացրել (տե՛ս գծապատկեր 30):

Գծապատկեր 30. Համայնքների բաշումն ըստ սուբվենցիոն ծրագրերի քանակի, 2019 և 2020թթ.



Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏԶՀԿ հաշվարկներ

Տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի թվում գերակշռում են ներհամայնքային ճանապարհների կառուցմանը և նորոգմանն ուղղված ծրագրերը: Քննարկվող երկու տարիների ընթացքում 24 համայնքներում իրականացվել են ճանապարհների կառուցման կամ նորոգման աշխատանքներ, որոնց ուղղվել է 1,028.4 մլն դրամ:

17 համայնքներում իրականացվել են փողոցային լուսավորության համակարգերի կառուցման և նորոգմանն ուղղված ծրագրեր, որոնց ուղղվել է 188.0 մլն դրամ:

Մեծ թիվ են կազմում նաև ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման և նորոգման ծրագրերը: 7 համայնքներում իրականացվել են ջրամատակարարման ցանցի կառուցման և վերանորոգման աշխատանքներ, իսկ 6 համայնքներում կառուցվել կամ վերակառուցվել են ջրահեռացման համակարգերը:

6 համայնքներում 40.8 մլն դրամ համաֆինանսավորմամբ իրականացվել են էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանն ուղղված ծրագրեր. տեղադրվել են արևային ֆոտովոլտային կայաններ, որոշ համայնքներում կառուցվել է նաև արտաքին լուսավորության ցանց:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2 համայնքներ ամբողջությամբ կամ մասնակի գազաֆիկացվել են, որոնց պետական բյուջեից ուղղվել է 53.5 մլն դրամ:

7 համայնքներում տարատեսակ մեքենասարքավորումների ձեռքբերմանն է ուղղվել 134.0 մլն դրամ, ներառյալ՝ 5 համայնքում 54.2 մլն դրամ ուղղվել է գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների ձեռքբերմանը:

Գյուղատնտեսական նշանակության ծրագրերը հիմնականում ուղղված են ոռոգման համակարգերի բարելավումներին և հակակարկտային կայանների տեղադրմանը: Մարզի 6 համայնքներում ոռոգման համակարգի կառուցման և նորոգման ծրագրերին է ուղղվել 108.5 մլն դրամ, իսկ 2 համայնքներում իրականացվել են հակակարկտային կայանների ձեռքբերման ծրագրեր, որոնց ուղղվել է 21.0 մլն դրամ:

Սոցիալ-մշակութային նշանակության սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում վերակառուցվել կամ նորոգվել են մանկապարտեզների շենքեր՝ 3 համայնքում, հասարակական նշանակության տարբեր շենքեր՝ 9 համայնքում, իրականացվել են ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգման աշխատանքներ՝ 5 համայնքում, այգիների և պուրակների բարեկարգման աշխատանքներ՝ 5 համայնքում, կառուցվել են ֆուտբոլային մարզադաշտեր՝ 2 համայնքում (առավել մանրամասն տե՛ս ստորև գծապատկերում):

Գծապատկեր 31. Պետական բյուջեից ԼՄ համայնքներին տրամադրված սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների և ուղղությունների, մլն դրամ, 2019-2020թթ.

	Ճանապարհների կառուցում/նորոգում	Մեքենասարքավորումների ձեռքբերում	Մանկապարտեզների կառուցում/նորոգում	Հասարակական շենքերի (կառուցում/վերանորոգում	Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	Խմելու ջրամատակարարման, ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում	Շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում	Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	Հակակարկտային կայանների ձեռքբերում	Բնակավայրերի գազաֆիկացում	Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում	Ֆուտբոլի մարզադաշտի կառուցում	**Ընդամենը, մլն դրամ**	**Ընդամենը, տոկոս**
Ալավերդի	23.3							33.5						56.8	2.4
Ախթալա	53.9		33.0	26.4	21.3	36.5		87.3	28.6		39.6			326.6	13.5
Արևաշող	23.7						1.5					2.8		28.0	1.2
Արջուտ							4.6							4.6	0.2
Բազում	13.6													13.6	0.6
Գեղասար							5.4							5.4	0.2
Գյուլագարակ	30.4									5.3				35.7	1.5
Գոգարան	9.6						19.5							29.1	1.2
Գուգարք	22.8					7.0		6.8						36.6	1.5
Դարպաս	12.9													12.9	0.5
Դեբեդ						13.6								13.6	0.6
Դսեղ	7.3						5.5		3.6					16.4	0.7
Եղեգնուտ						5.3								5.3	0.2
Թումանյան					13.7	17.6			11.4					42.7	1.8
Լեռնանցք						14.3			11.8					26.2	1.1
Լեռնապատ	7.8	9.5												17.3	0.7
Լեռնավան	7.2					6.0			8.1					21.3	0.9
Լոռի Բերդ	6.5	22.4		43.1		51.0				15.8				138.7	5.7
Լուսաղբյուր					9.9				5.7					15.6	0.6
Ծաղկաբեր						12.7								12.7	0.5
Կաթնաջուր	13.8	6.8							4.4					25.1	1.0
Հարթագյուղ	8.9				17.5									26.5	1.1
Մարգահովիտ	44.9					4.0			11.7				7.2	67.7	2.8
Մեծ Պարնի				13.9					8.8					22.7	0.9
Մեծավան	10.4	16.0	10.9	37.3		6.5			9.2					90.2	3.7
Շահումյան	19.9								8.3					28.2	1.2
Շենավան							4.3							4.3	0.2
Շիրակամուտ									5.6					5.6	0.2
Շնող				10.7										10.7	0.4
Չկալով											13.9			13.9	0.6
Ջրաշեն	36.5		4.5											41.0	1.7
Սարահարթ					23.4	5.8			5.0				14.5	48.6	2.0
Սարամեջ	7.2								5.1					12.3	0.5
Սարչապետ				17.4								4.6		22.0	0.9
Սպիտակ	56.7	34.2						11.6	8.4			24.0		134.8	5.6
Ստեփանավան	60.1													60.1	2.5
Վահագնի		4.0												4.0	0.2
Վանաձոր	446.8	41.0		86.9								120.1		694.9	28.8
Տաշիր	38.1			43.6				4.5	39.9					126.1	5.2
Օձուն	66.0			3.7	22.6				12.3			13.4		118.1	4.9
Ընդամենը, մլն դրամ	1,028.4	134.0	48.4	282.9	108.5	180.3	40.8	143.7	188.0	21.0	53.5	164.9	21.7	2,416.0	-
Ընդամենը, տոկոս	42.6	5.5	2.0	11.7	4.5	7.5	1.7	5.9	7.8	0.9	2.2	6.8	0.9	-	100.0

Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏԶՀԿ հաշվարկներ

ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Բացի համայնքներին տրամադրվող դոտացիաներից և սուբվենցիաներից, ինչպես նաև պետական բյուջեից հանրապետական մակարդակով իրականացվող բյուջետային ծրագրերից, ստորև առանձնացնում ենք մի շարք արտաքին օժանդակությամբ իրականացվող ծրագրեր[13], որոնք էական ազդեցություն ունեն Լոռու մարզի սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից և ուղղված են մարզի առանձին հիմնախնդիրների լուծմանը:

- ԳԷՀ աջակցությամբ իրականացվող **Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն ծրագրի՝** Հողերի կայուն կառավարման բաղադրիչի շրջանակներում Լոռու մարզի 2 բնակավայրերում իրականացվել է ոռոգման և ջրամատակարարման համակարգերի բարելավում:

Բնակավայր	Ջրամատակարարման համակարգերի բարելավում, վերակառուցում	Ոռոգման ցանցի վերակառուցում
Դսեղ	✓	✓
Սվերդլով	✓	

- ՀԲ աջակցությամբ իրականացվող **Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի** ներքո 2009 թվականից ի վեր Լոռու մարզում վերանորոգվել է 81.81 կմ երկարությամբ ճանապարհ:

Ճանապարհահատված	Երկարություն (կմ)
Մ6–Դսեղ-Չկալով կմ0+000–կմ2+440	2.44
Մ3-Գյուլագարակ–Վարդաբլուր–Կուրթան կմ0+000–կմ4+500	4.50
Մ3-Գյուլագարակ–Վարդաբլուր–Կուրթան կմ4+500–կմ8+130	3.63
Ճանապարհային անվտանգության բարելավում Մ3-Գյուլաքարակ-Վարդաբլուր-Կուրթան կմ0+000 և կմ0+300-կմ0+600	0.60
Մ3-Մեծավան կմ0+000-կմ8+534)	8.53
Մ7-Արևաշող	2.5
Ագարակ-Յաղդան-Կողես-Մղարթ-Արեւածագ-Կարմիր Աղեք-Ծաթեր-Այգեհատ-Արդվի-Օձուն-Մ6, կմ0+000-կմ15+706	15.7
Ագարակ-Յաղդան-Կողես-Մղարթ-Արեւածագ-Կարմիր Աղեք-Ծաթեր-Այգեհատ-Արդվի-Օձուն-Մ6, կմ15+706-կմ21+900	6.2
Ագարակ-Յաղդան-Կողես-Մղարթ-Արեւածագ-Կարմիր Աղեք-Ծաթեր-Այգեհատ-Արդվի-Օձուն-Մ6, կմ21+900-կմ28+240	6.3
Ագարակ-Յաղդան-Կողես-Մղարթ-Արեւածագ-Կարմիր Աղեք-Ծաթեր-Այգեհատ-Արդվի-Օձուն-Մ6, Մուտք Արդվի, կմ0+000-կմ2+571 և մուտք Մղարթ, կմ0+000-կմ0+907	3.5
Ագարակ-Յաղդան-Կողես-Մղարթ-Արեւածագ-Կարմիր Աղեք-Ծաթեր-Այգեհատ-Արդվի-Օձուն-Մ6, Մուտք Արևածագ-Ծաթեր, կմ0+000-կմ3+877 և մուտք Արևածագ-Կարմիր Աղեք, կմ0+000-կմ3+ 973	7.8
Մ7-Մեծ Պարնի-Ծաղկաբեր կմ0+000-կմ6+240	7.20
Մ6 -Եղեգնուտ-Դեբեդ, կմ0+000-կմ7+183(իջ.0,1+0,845+0,073=1,018)	8.20
S-5-32-Կաթնաջուր, կմ0+000-կմ4+370 (իջ.0,181+0,15=0,337)	4.71

[13] Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային և դրամաշնորհային բոլոր այն ծրագրերը, որոնք չեն իրականացվում պետական բյուջեի միջոցով, այս խմբում ներառված չեն:

- ՀԲ աջակցությամբ իրականացվող **Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի** շրջանակներում Լոռու մարզում իրականացվել են համայնքների ջրագծերի, առողջապահության, կրթության, մշակույթի, հատուկ խնամքի և ենթակառուցվածքների ոլորտի վերականգնման և շինարարության աշխատանքներ:

	Միկրոծրագիր	Բնակավայր/համայնք	Իրականացման կարգավիճակը
	Մանկապարտեզի վերակառուցում	Լերմոնտովո	Իրականացված է
		Վանաձոր (N 11 մանկապարտեզ)	Իրականացված է
		Վանաձոր (N 11 մանկապարտեզի 2-րդ մասնաշենք)	Ընթացքում է
	Մանկապարտեզի կառուցում	Գյուլագարակ	Իրականացված է
	Դպրոցի վերակառուցում	Ախթալա	Իրականացված է
	Դպրոցի մարզադահլիճի վերակառուցում, կառուցում	Արևաշող	Իրականացված է
	Մշակույթի տան վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում	Սպիտակ	Իրականացված է
	Մարզադպրոցի հատակների վերակառուցում	Ստեփանավան	Իրականացված է
	Ըմբշամարտի դպրոցի վերակառուցում	Տաշիր	Իրականացված է
	Համայնքի կենտրոնի և համալիր սոցիալական ծառայության շենքի վերակառուցում	Ալավերդի	Իրականացված է
	Համաբուժարանի վերակառուցում	Ստեփանավան	Իրականացված է
	Կոմունալ սպասարկման ոլորտի տեխնիկական վերազինում, գյուղատնտեսության աջակցություն և ուղևորափոխադրող տրանսպորտային միջոցի ապահովում	Ախթալա	Իրականացված է
	Կոմունալ ծառայությունների բարելավում, ճանապարհների սպասարկում և գյուղատնտեսության զարգացման աջակցություն, տեխնիկական վերազինում	Ալավերդի	Ընթացքում է
		Մեծավան	Իրականացված է
	Կոմունալ ծառայությունների, աղբահանության և ճանապարհների սպասարկման համակարգի բարելավում, տեխնիկական վերազինում	Ստեփանավան	Իրականացված է
		Գյուլագարակ	Իրականացված է
		Տաշիր	
	Կոմունալ ծառայությունների բարելավում և գյուղատնտեսության աջակցություն, տեխնիկական վերազինում	Լոռի Բերդ	Իրականացված է
		Սարչապետ	Իրականացված է
	Գյուղատնտեսության աջակցություն՝ ժամանակակից տեխնիկայի ձեռքբերման միջոցով	Շնող	Իրականացված է
	Բազմաֆունկցիոնալ տեխնիկայի ձեռքբերում	Օձուն	Իրականացված է

- ՀԲ աջակցությամբ իրականացվող **Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի** շրջանակներում Լոռու մարզում կառուցվել են ավելի քան 2.7կմ ջրագծեր, 7 հովվի տնակ և 8 փարախ, 1 անասնաբուժական սպասարկման կենտրոն, ինչպես նաև ներդրումներ են իրականացվել սննդամթերքի 7 գործարաններում՝ արժեշղթաներում տեղական արտադրողների և վերամշակողների կարողությունները բարձրացնելու նպատակով:

	Բնակավայր	**Ջրարբիացման համակարգ, միավոր**	**Խողովակաշարի երկարություն, մ**	**Հովվի տնակ, միավոր**	**Փարախ, միավոր**	**Իրականացման կարգավիճակը**
I բաղադրիչ Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգեր	Մարգահովիտ	3	400	1	1	Իրականացված է
	Լեռնանցք	5	300	0	0	Իրականացված է
	Սարամեջ	2	250	2	**2**	Իրականացված է
	Հարթագյուղ	3	600	1	1	Իրականացված է
	Գոգարան	1	150	1	2	Ընթացքում է
	Ջրաշեն	1	326	1	1	Իրականացված է
	Մեծավան	4	720	1	1	Իրականացված է

	Արժեշղթա	**Հայտատու**	**Բնակավայր**	**Ծրագիր**	**Իրականացման կարգավիճակը**
II բաղադրիչ Արժեշղթայի զարգացում	**Կաթ**	«Վիլիջ» ՍՊԸ	Տաշիր	Բարձրարժեք պանրի արտադրության և արտահանման ծավալների ավելացում, սննդամթերքի անվտանգության կառավարման ISO 22000: 2018 համակարգի ներդրում	Ընթացքում է
		«Համով կաթ» ՍՊԸ	Ալավերդի	Արտադրության վերազինում, արտադրանքի ծավալների ավելացում, սննդի անվտանգության ISO 22000: 2018 կառավարման համակարգի ներդրում	Ընթացքում է
		«Տարոն Մաթևոսյան» Ա/Ձ	Վանաձոր	Արտադրամասի վերազինում, կաթնամթերքի արտադրության և իրացման ծավալների ավելացում, սննդի անվտանգության HACCAP կառավարման համակարգի ներդրում	Ընթացքում է
		«ԱԼԱՇԿԵՐՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Տաշիր	Պանիրների մանրածավալ փաթեթավորման և ֆիզիկական ռիսկերի վերահսկման համակարգի ներդրում	Ընթացքում է
		Մանուկյան» Ա/Ձ	ՈՒռուտ	«Մերանի» ապրանքանիշի զարգացում և արտադրության վերազինում	Ընթացքում է
	Միրգ, բանջարեղեն (պահածոների և հյութերի արտադրություն)	«ՌոզՖռուդ» ՍՊԸ	Վանաձոր	Արտադրամասի վերազինում, արտադրության և արտահամնան ծավալների ավելացում, սննդի անվտանգության կառավարման ISO 22000: 2018 համակարգի ներդրում	Ընթացքում է

	Կերարտադրություն	«Հրայր Գեղամի Յաղուբյան» Ա/Ձ	Հարթագյուղ	Համակցված կերերի արտադրության կազմակերպում, սննդի անվտանգության ISO 22002-1 (GMP) կառավարման համակարգի ներդրում	Ընթացքում է
III բաղադրիչ Պետական կառույցների կարողությունների հզորացում	**Համայնք**			**Ծրագիր**	**Իրականացման կարգավիճակը**
	Մեծ Պարնի			Անասնաբուժական սպասարկման կենտրոնի բացում	Իրականացված է

- ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող **Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրի** շրջանակներում Լոռու մարզի Թումանյան համայնքում իրականացվել են ներդրումներ՝ համայնքային զարգացման սոցիալական, տնտեսական, սանիտարական և շրջակա միջավայրի պահպանության ենթակառուցվածքներում: Մասնավորապես հանրային ծառայությունների որակի բարձրացման նպատակով իրականացվել է համայնքի տեխնիկական վերազինում, ձեռք են բերվել միկրոավտոբուսներ, կառուցվել են կանգառներ և ավտոկայանատեղի:
- ԱԶԲ աջակցությամբ իրականացվող **Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավում ծրագիր** շրջանակներում Լոռու մարզում արդեն իսկ ավարտվել է Վանաձորի թիվ 7 հիմնական դպրոցի կառուցման աշխատանքները և ընթացքում են Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոցի կառուցման աշխատանքները:
- ՀԲ աջակցությամբ իրականացվող **Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրով** ավարտվել են Դենդրոպարկի ճանապարհի վերակառուցման աշխատանքները:
- ԱԶԲ և ԵՆԲ աջակցությամբ իրականացվող **Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագ**րի շրջանակներում իրականացվում են Հայաստանի Հանրապետությունը Վրաստանի Հանրապետության հետ կապող՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստան միջպետական ճանապարհի հիմնանորոգում և վերակառուցում:
- Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության Հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող **Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների** ծրագով իրականացվում են Լոռու մարզի Ուռուտ և Ագարակ բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում:
- ԵՄ աջակցությամբ իրականացվող **Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի** շրջանակներում Լոռու մարզում իրականացվում է «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը՝ որպես հիմնական նախապայման տեղական /տարածաշրջանային տնտեսական զարգացման համար» պիլոտային ծրագիրը (իրականացնող՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ):

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների կառուցվածն ըստ եկամուտների աղբյուրների, Լոռու մարզ 5
Աղյուսակ 2. Լոռու մարզի զարգացման ռազմավարական ուղղությունները և չափորոշիչները..... 8
Աղյուսակ 3. Լոռու մարզի համայնքային բյուջեների հիմնական ցուցանիշները, 2018-2021թթ. 9
Աղյուսակ 4. ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգումը, 2020թ. 17

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. Լոռու մարզի բնակչության կառուցվածքն ըստ բնակավայրերի, տոկոս..... 3
Գծապատկեր 2. ՀՆԱ կառուցվածքն ըստ մարզերի, 2018թ., տոկոս..... 4
Գծապատկեր 3. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ըստ մարզերի, 2018թ., հազար դրամ 4
Գծապատկեր 4. Լոռու մարզի տնտեսության հիմնական ճյուղերի կշիռը համապատասխան ճյուղերի ՀՀ համախառն արտադրանքի ծավալում, 2019թ., տոկոս 4
Գծապատկեր 5. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ ճյուղերի, 2019թ., տոկոս..... 4
Գծապատկեր 6. Զբաղվածության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս 5
Գծապատկեր 7. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի, 2019թ., տոկոս 5
Գծապատկեր 8. SS մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտները, դրամ 5
Գծապատկեր 9. Միջին ամսական աշխատավարձի մակարդակն ըստ մարզերի, 2019թ., դրամ 6
Գծապատկեր 10. Լոռու մարզում SS մեկ շնչի հաշվով ամսական սպառողական ծախսերի դինամիկան 2015-2019թթ. 6
Գծապատկեր 11. Աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների դինամիկան Լոռու մարզում և ՀՀ-ում, 2015-2019թթ., տոկոս 7
Գծապատկեր 12. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող SS-ների բաշխումն ըստ մարզերի, 2020 թվականի տարեվերջի դրությամբ..... 7
Գծապատկեր 13. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերի ցուցանիշը, ՀՀ դրամ..... 9
Գծապատկեր 14. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտների ցուցանիշը, ՀՀ դրամ 9
Գծապատկեր 15. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների ծախսերն ըստ մարզերի, ՀՀ դրամ..... 10
Գծապատկեր 16. Մեկ շնչի հաշվով համայնքների բյուջեների եկամուտներն ըստ մարզերի, ՀՀ դրամ 10
Գծապատկեր 17. Լոռու մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտների կառուցվածքը, 2018, 2020թթ.,տոկոս 10
Գծապատկեր 18. Լոռու մարզի համայնքային ամփոփ բյուջեի եկամուտները, 2018-2021թթ., մլն դրամ 11
Գծապատկեր 19. ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի հարկերի և տուրքերի կառուցվածքը, 2018-2021թթ., տոկոս..... 11
Գծապատկեր 20. ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի հարկերի և տուրքերի դինամիկան, 2018-2021թթ., հազար դրամ 11
Գծապատկեր 21. Համայնքների բաշխումն ըստ մեկ բնակչի հաշվով գույքահարկի մակարդակի..... 12
Գծապատկեր 22. Լոռու մարզի համայնքային ամփոփ բյուջեի ներքին դրամաշնորհների կառուցվածքը 13
Գծապատկեր 23. Դոտացիաների բաշխումն ըստ համայնքների, մլն դրամ, 2020թ. 14
Գծապատկեր 24. Կապիտալ սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների8, մլն դրամ, 2020թ..... 14
Գծապատկեր 25. Ընթացիկ սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների, մլն դրամ, 2020թ..... 15
Գծապատկեր 26. Լոռու մարզի համայնքային ամփոփ բյուջեի ծախսերի կառուցվածքն ըստ համայնքների, 2020թ., տոկոս..... 15
Գծապատկեր 27. ԼՄ համայնքային ամփոփ բյուջեի ծախսային ուղղությունների կշիռները ԼՄ համայնքային ամփոփ բյուջեում, 2018-2021թթ., տոկոս 16
Գծապատկեր 28. Սուբվենցիոն ծրագրերի բաշխումն ըստ ոլորտների, մլն դրամ..... 18
Գծապատկեր 29. Սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման բաշխումն ըստ համայնքների, տոկոս 18
Գծապատկեր 30. Համայնքների բաշումն ըստ սուբվենցիոն ծրագրերի քանակի, 2019 և 2020թթ..... 18
Գծապատկեր 31. Պետական բյուջեից ԼՄ համայնքներին տրամադրված սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների և ուղղությունների, մլն դրամ, 2019-2020թթ. 20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
Ա/Ձ	Անհատ ձեռնարկատեր
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ԼՄ	Լոռու մարզ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՄևԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏՏ	Տնային տնտեսություն
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կառույց
ՖՆ	Ֆինանսների նախարարություն